

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Նորին Սրբության Գարեգին Կաթողիկոսի և միաբանության անունից շնորհավորում ենք նոր տարին, Մնունդը և ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար կյանք՝ ծառայելու Հայ Եկեղեցուն և ազգին:

Գարեգին Կաթողիկոսը ապահինվում է միաբանության և բժիշկների հոգատար խնամքի շնորհիվ:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍՏԱՄԲՈՒԼԻՑ

Ամանորի և Ս. Մնունդյան առթիվ ընդունեցեք Թյուրքիո Ձեր բոլոր զավակց՝ հոգևորականաց, աշխարհականաց, պաշտոնական մարմնոց և մեր շնորհավորանքն ու սրտագին մաղթանքը Վենիդ՝ հաջողության, արևշատության համար:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Ձերդ Վեհափառության հայտնում ենք ջերմագին շնորհավորություններ Քրիստոսի Մնունդյան և նոր տարվա առթիվ: Ցանկանում ենք Ձերդ Վեհափառության երկար, երջանիկ կյանք, Եկեղեցուն և Հայրենիքին՝ բարգավաճում:

Պատրիարքական տեղապահ՝

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Մայրաքաղաքի եկեղեցական դասի և հավատացյալների անունից շնորհավորում ենք Ձերդ Վեհափառությանը՝ Ծննդյան և Մկրտության Ս. տոների առթիվ և բարեմաղթում ենք՝ որ Ձեր հովանին անպակաս լինի մեր վրայից և Ձեր օրհնությամբ Տերը անխախտ պահի խաղաղությունն աշխարհում:

Քահանայության և հավատացյալ ժողովրդի անունից՝

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԹԲԻԼԻՍԻՑ

Վրաստանի հայոց թեմական խորհուրդը, հոգևորականությունը և հավատացյալ հոտը ջերմագին շնորհավորում են Ձերդ Վեհափառությանը՝ Փրկչի Ս. Ծննդյան և Մկրտության առթիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն հոգուտ և ի մխիթարություն հավատացյալ ժողովրդի:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐԵԻՑ

Ամանորի և Աստվածահայտնության տոների առթիվ Ձերդ Վեհափառության հայտնում ենք մեր հարգալիր շնորհավորությունները և մեր ու եգիպտոսի հայերի հավատարմությունը: Աղոթում ենք Ամենակարողին, որ Ձերդ Վեհափառության պարգևե երկար կյանք, բարգավաճում՝ ի երջանկություն Ձեր հոտի:

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՓԱՐԻԶԻՑ

Նոր տարվա և Ծննդի առթիվ հայտնում ենք մեր ամենալավագույն ցանկությունները՝ առողջության, հարգանքի, մեծարանաց: Ցանկանում ենք հայոց դարավոր Սուրբ Եկեղեցուն բարգավաճում Ձեր կորովամիտ իմաստության հովանու տակ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԹԵՄԻՑ

Թեմական խորհուրդը, եկեղեցական դասը և հավատացյալ ժողովուրդը շնորհավորում են Ձերդ Սրբությանը և Ս. էջմիածնի միաբանությանը՝ Քրիստոսի հրաշափառ Ծննդյան և Մկրտության առթիվ:

ՍՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Շնորհավորելով նոր տարին և Ս. Ծնունդը, մեր և մեր համայնքի կողմանե կմաղթենք Ձեզ առողջ և երկար կյանք:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի թեմական խորհրդի, հոգևորականության և հավատացյալների անունից շնորհավորում եմ Ձերդ Վեհափառությանը՝ Ծննդյան և Մկրտության տոների առթիվ և ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և երկար կյանք: Համբուրում եմ Ձերդ Սրբության Աջը:

ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱԹԵՆՔԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոներու բարեպատեհ առիթով, պատիվ ունիմ հանուն գաղութիս մատուցանելու ջերմագին շնորհավորություններ և որդիական սրտագին բարեմաղթություններ՝ Ձեր և Հոգևոր խորհուրդի անդամոց արեշատության համար:

ԽՈՇՈՐՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Հոգևորականությունը և եկեղեցական խորհուրդը շնորհավորում են Ձեզ նոր տարվա, Քրիստոսի Ծննդյան և Մկրտության առթիվ և ցանկանում Ձեզ երկար կյանք և քաջառողջություն՝ ի շահ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԵՀՐԱՆԻՑ

Շնորհավոր նոր տարի և Փրկչի Ս. Ծնունդը: Ցանկանում եմ առողջություն և երկար կյանք Ս. Էջմիածնի միաբանության, Գերագույն խորհրդին:

ՏԵՐ ՎԱՀԱՆ ՄԻՔԵԼՅԱՆ

ԹԱՎՐԻԶԻՑ

Թեմական ժողովը, թեմական խորհուրդը, քահանայից դասը և համայն ժողովուրդը խոնարհությամբ համբուրելով Ձեր Սուրբ Աջը, շնորհավորում են նոր տարվա և Ս. Ծննդյան տոները, մաղթելով Բարձրյալին, որ Ձերդ Վեհափառության պարգևե երկար կյանք և երջանիկ օրեր:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԲԱՂԴԱԴԻՑ

Համայնքը և հոգևորական դասը շնորհավորում են նոր տարին և Ծնունդը, ցանկանալով երկար կյանք և բարգավաճում:

ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ, հանուն ռումինահայ հայրենասեր հավատացյալ ժողովրդին, Ձերդ Վեհափառության ներկայացնում ենք ջերմագին շնորհավորություններ և բարեմաղթություններ Ձերդ արևշատության համար: Թող Տերը անսասան պահի մեր Ս. եկեղեցին և Ս. Էջմիածինը: Թող Տերը խաղաղության և բարօրության մեջ հավետ անսասան պահե մեր վերածնված Մայր Հայրենիքը:

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍՈՖԻԱՅԻՑ

Նոր տարվան և Ս. Ծննդյան տոներուն առթիվ ընդունեցեք բուլղարահայ հավատացյալներու, հոգևորականության որդիական շնորհավորություններն ու բարեմաղթությունները, Մայր Աթոռ հաստատության և ձեր առողջության և երկարակեցության համար:

ԱՎԱԳՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Նոր տարվա և Ծննդյան տոների առթիվ խոնարհաբար հայտնելով մեր սրտագին շնորհավորանքները, բարեմաղթում ենք Նորին Վեհափառության արևշատություն և երկար կյանք:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության և միաբանության նոր տարին և Ս. Ծնունդը:

Լավագույն բարեմաղթություններով՝

ՔԱՀԱՆԱՅՔ, ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՅՆՔ

ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻՑ

Նոր տարին և Ս. Ծնունդը շնորհավորելով, երկար ու երջանիկ տարիներ կմաղթեմ Ձեր Ս. Օծության՝ Բարձրյալեն:

Աստված անսասան պահե Մայր Աթոռը՝ իր արժանընտիր գահակալովը և Մայր Հայրենիքը՝ իր նախագահով, նախարարներով և ժողովուրդով:

Մատչելով ի համբույր Ս. և Օծյալ Աջույդ, մնամ ամենախոնարհ որդիդ՝

Փոխանորդ կաթողիկոսական պատվիրակի
և հոգևոր Հովիվ Մոնտեվիդեոյի՝

ՆԵՐՍԵՍ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏՈԼԱՊՃՅԱՆ

ՇՏՈՒՏԳԱՐԴԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ շնորհավորություններ և սրտագին բարեմաղթություններ:

Մերձենալով Ս. Աջիդ ծնրադիր, կարոտ հայրական օրհնությանդ՝

ԳՐԻԳՈՐ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՀԼԱՄՅԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼԻՑ

Ամանորի և Փրկչին հրաշափառ Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնին կրկնակ առիթներով, որդիական ակնածությամբ կփութամ Ձերդ Սրբության մատուցանել սրտագին շնորհավորություններ, Հայաստանյայց եկեղեցվո միասնականության, փառապանծ Մայր Աթոռո անսասանության, և ազգիս Վեհափառ Հայրապետիդ թանկագին կենաց երկարության ու բաջողության ամենաջերմ բարեմաղթություններով:

Ձերդ Ս. Օծության սրբամաքուր աղոթքներուն շնորհիվ, 1952 տարին թող լինի ավետաբերը՝ աշխարհի խաղաղության, ազգերու հաշտության և մարդկանց եղբայրության:

Մատչելով ի համբույր Օծյալ Ս. Աջո Վեհափառ Տյառնդ, մնամ ամենախոնարհ ծառա և հնազանդ որդի՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԴԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՀՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Խնդրում ենք Ձերդ Սրբությանն ընդունել մեր սրտագին շնորհավորությունները նոր տարվա և սուրբ տոների առթիվ: Ծնվող Փրկիչը բող խաղաղություն և հանություն նվիրաբերի աշխարհին, որոնք Ձերդ Սրբության նվիրական ցանկությունն են հանդիսանում:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅ

ԹԲԻԼԻՍԻՑ

Ձերդ Սրբություն, Սրբազան Տեր, ողորմած Հովվապետ և Հայր Հարանց.

Կանխանաշակելով հրեշտակային երգեցողության քաղցրությունը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն» (Ղուկաս, Բ 14), որը մի քանի օրից հետո կկատարվի մեր ուղղափառ տաճարներում, ողջունում ենք Ձերդ Սրբությանը և Ձեր իրավասության տակ գտնըվող միաբաններին, քահանաներին, սարկավագներին և հավատացյալ ժողովրդին՝ առաջիկա նոր տարվա ու սուրբ տոների առթիվ, սրտագին-ջերմագին ցանկանալով, որ առաջիկա տարում իսկական խաղաղություն հաստատվի աշխարհում և բարեհանություն՝ մարդկանց մեջ:

Ձերդ Սրբության սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ

ԿԱԼԻՍՏՐԱՏ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ձերդ Սրբություն, Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս.

Օրհնութիւն և խաղաղութիւն ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, յԱստուծոյ և ի Փրկչէն մերմէ:

«Եւ ժողովուրդն, որ նստէր ի խաւարի, ետես զլոյս մեծ».— այս խոսքերով մարգարեն կանխագուշակեց Ավետարանչի գալուստն հաշխարհ: Տիրոջ՝ Ս. Փրկչի Ծննդյան այս տոնին, բոլոր քրիստոնյա ժողովուրդները միասնական են իրենց ուրախությամբ, իրենց Փրկչի Ծննդյամբ: Մեզնով է, որ մարգարեությունը կատարվել է, քանի որ Ծննդյան տոնի մեր պաշտամունքով մենք բերկրում ենք աստվածային սիրո փառավոր լույսով և իմաստունների նման աստվածային խորհրդավոր աստղին ենք հետևում խավար ու անավոր մի աշխարհում:

Հանուն Մանուկ Հիսուսի, մեր տածած սիրո միանմանությամբ, ողջունում ենք Ձերդ Սրբությանը, համոզված լինելով, որ մարդիկ կարող են իրենց երջանկությունն ու բարությունը գտնել միայն մարդեղության վերաբերյալ աստվածային պատգամի և հրամանի ճանաչողությամբ:

Օգտվելով այս առիթից, ցանկանում եմ մի անգամ ևս արտահայտվել այն բարձր գնահատականի մասին, որ ես տալիս եմ Անգլիական և հայկական եկեղեցականների միջև գոյություն ունեցող բարեկամական փոխհարաբերությանց մասին ողջ աշխարհում: Միաժամանակ օգտվելով այս հանգամանքից, այսու ուղարկում եմ Ձերդ Սրբության մեկ պատճենն այն ուղերձի, որ ես արտասանել եմ Վարդանանց պատերազմի 1.500-ամյակի տոնակատարության առթիվ Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցում:

Սիրեցյա՛լ Եղբայր, խնդրում եմ ընդունել իմ անկեղծ ողջույնները Սուրբ Տիրոջ ծննդյան այս օրը, ինչպես նաև իմ մաղթանքները, որ Աստված առաջնորդի և օրհնի Ձերդ Սրբությանը, Ձեր հովանավորության տակ գտնվող Ձեր հավատացյալ ժողովրդին, և տանի մեզ և իր բոլոր հետևորդներին դեպի միության, սիրո և խաղաղության իր բազավորությունը:

Մնամ Ձեր անկեղծ սիրով եղբայր ի Քրիստոս՝

ՉԵՈՖՖՐԻ

Կենտրբերիի Արքեպիսկոպոս,

Եպիսկոպոսապետ և Առաջնորդ Համայն Անգլիո

ՌԻԳԱՅԻՑ

Քրիստոսի ծննդյան լուսափայլ տոնի և նոր տարվա առթիվ խնդրում ենք ընդունեք սրտագին ողջույններ մեր ղեկավարած Լուտերական Ավետարանական Եկեղեցու Գլխավոր Սինոդի կողմից: Անկեղծ շնորհակալություն ենք հայտնում Ձեզ՝ Առաքելական հնագույն եկեղեցու Սրբազան Պատրիարքիդ, Սինոդի հաջող աշխատանքներին համար Ձեր արտահայտած բարեմաղթության, ինչպես և Ձեր բարեհաճ վերաբերմունքի համար դեպի մեր եկեղեցին: Աղոթելով մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և երկար կյանք:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ՍՈՖԻԱՅԻՑ

Ձերդ Երանություն.

Աստվածային մեծագույն ողորմությամբ մենք ապրեցինք մինչև 1952 թվականը, մինչև աշխարհի լուսավոր տոնը՝ Քրիստոսի Ծնունդը:

«Եվ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան, որ երևեցաւ մարմնով» (Ա. Տիմ., Գ 16): Ե՛վ հրեշտակները, և՛ հովիվները, և՛ իմաստունները երկյուղածությամբ են լցված մարդեղության անքննելի խորհուրդի առջև: Մեզ մոտ է գալիս աշխարհի իշխանը (Ես., Թ 16): Ծնվում է մարդկության Փրկիչը: Այս առթիվ հրեշտակները երգում են. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ., Բ 14):

Քրիստոսի այդ խաղաղությունը նվիրական բաղձանքն է եղել տանջված, հարստահարված և նախատված ժողովուրդների: Եվ նրա իրագործմանը աջակցելու կոչված ենք մենք, Քրիստոսի խոնարհ ծառաներս և «հազարապետս խորհրդոցն Աստուծոյ» (Ա. Կորնթ., Դ 1):

Թո՛ղ նշմարտության Արեգակը, որը փայլեց Բեթղեհեմում, լուսավորի բոլորի սրտերը, լուսավորի բոլորի միտքը՝ միավորելով բոլորին հզոր խաղաղաստեղծ վերելքի համար:

Սրբազան Սինոդի և մեր անունից շնորհավորելով Ձեզ Քրիստոսի խաղաղության և սիրո Սուրբ տոնի առթիվ, ջերմագին խնդրում ենք Աստծուց, որ իր ողորմությունն առատի նոր՝ 1952 թվականի ընթացքում բազմաշարշար մարդկությանը և մարմնանան ավետարանական վեհ գաղափարները՝ ժողովուրդների միջև խաղաղության և աշխարհի վրա հաստության մասին:

Բեթղեհեմում ծնված աստվածամանուկը թող իր երկնային շնորհը սփռի Ձեր Ս. Ուղղափառ եկեղեցու և Ձեր հավատացյալ հոտի վրա, և Ձեզ պարգևի առողջություն, երկարակեցություն և ուրախություն:

Հայցելով Ձեր աղոթքները, մնամ Ձերդ Երանության հավատարիմ սիրով առ Տեր, Ձերդ հնազանդ եղբայր և կարգակից՝

Սուրբ Սինոդի փոխարինող նախագահ՝
ՊԼՈՎԴԻՎՍԿԻՑ

ՏԱԼԼԻՆԻՑ

Եղբայրական սիրով և ավետարանական անկեղծությամբ սրտագին շնորհավորանքներ ենք հղում Ձերդ Սրբությանը և Ձեր գլխավորած եկեղեցուն նոր տարվա առթիվ: Թող օրհնվի Ձեր գործունեությունը նոր տարում հօգուտ մեր եղբայրական եկեղեցիների:

Էստոնական ՍՍՌ
Ավետարանական-Լուտերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
ՅԱՆ-ԿԻՑՎԻՏ